Ալեքսանդր Ծատուրյան

Դարավերջի բարքերից

«Մահ Զոլային, թքե՛լ Զոլայի վերա...»
(Լրագրներից)

Տխո՜ւր մտքեր են ինձ հուզում այսօր,
Այս ի՜նչ ողբալի, դժվար ժամանակ
Մեզ վիճակվել է ապրել և անզոր
Տեսնել չարության լրկտի հաղթանակ:

Խիղճ, պատիվ, օրենք ոտքի տակ տված,
Մարդիկ ծաղրում են ազատ զգացմունք.
Եվ ազգասերի կեղծ դիմակ հագած,
Կոկորդիլոսի՜ թափում արտասունք...

Եվ կույր ամբոխի գայրույթն ու հուզում
Կորո՜ւստ է սպառնում մտքին, տաղանդին,
Որպես պղտոր ծով, լափել է ուզում
Դալար ափ դիմող արի՜ լողորդին:

Զինամոլության ոգին ավերիչ,
Հանուն ազգային առաջդիմության,
Մարդասպան սրրով փշրում է գրրիչ
Անպարտին ճնշում երկաթե շղթան.

Օ՜, մեր լուսավո՛ր, գովա՛ծ դարավերջ,
Ահա քո բաշխած լույսը աշխարհին.
Կեղծի՜ք, չարությո՜ւն, հալածա՜նք անվերջ
Ահա՛ քո ավանդն հետագա դարին...